ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 02/17.4/45253-2021 «03» 01 2022թ.

«ՄԵԴԻՍԱՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
/ք. Երևան 0023, Գեղարքունիք 4/9/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար չափման և հսկողության սարքերի ձեռքբերման նպատակով՝ 16.11.2021թ. վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքել է ՆՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն) պարտավորվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված չափման և հսկողության սարքեր (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է

պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 16.11.2021թ. Ընկերության հետ կնքված ՈՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակիորեն լուծված:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը մասնակիորեն լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լ.Գասպարյան
գործերի կառավարչություն
Հեռ.010 515-663